ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2021 թվականի №----Ա
ք. Երևան

«ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՋԵՐՄՈՒԿՀԻԴՐՈ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0621 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի մայիսի 23-ի №169Ա որոշմամբ «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում՝ Արփա գետի աջակողմյան անանուն վտակի վրա, «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0621 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ№0621 լիցենզիա), որը Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №191Ա որոշմամբ վերաձևակերպվել է «ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով մեկ տարի տասն ամսով երկարաձգվել է ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 6 775 000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի մայիսի 8-ը գործողության ժամկետով, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի օգոստոսի 18-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2020

թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով նախատեսված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 18-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3502-2020 գրությամբ,

դ) Ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 25-ին Հանձնաժողով մուտքագրված գրությամբ, վկայակոչելով №ՎԴ/4540/05/20 վարչական գործի առկայությունը, խնդրել է հարուցված վարչական վարույթը կասեցնել,

ե) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №303Ա որոշմամբ կասեցվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/4540/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը,

զ) 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողով է մուտքագրվել №ՎԴ/4540/05/20 գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 30-ին կայացված վճիռը՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ նշումով: Նշված վճռով մերժվել է Ընկերության հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ մասնակիորեն՝ այն է քառասունհինգօրյա ժամկետում 6.775.000 ՀՀ դրամ գումարի երաշխիք ներկայացնելու պարտականություն ընկերության համար սահմանելու մասով (Որոշման 2-րդ կետ) Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

է) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին, Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում կարգին համապատասխան հաշվարկված երաշխիք,
- 8.1-րդ կետի համաձայն՝ Կարգի 8-րդ կետին համապատասխան լիցենզավորված անձի կողմից երաշխիք Հանձնաժողով չներկայացվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

ը) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը Կարգի 8-րդ կետին համապատասխան Որոշման 2-րդ կետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չի ներկայացրել, և

հիմք ընդունելով Կարգի 8.1 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 8-րդ կետին համապատասխան Որոշման 2-րդ կետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ԼԷ №0621 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2021թ.